ՄԱՆՎԵԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԶՈՒԼԱԼՅԱՆ

(ծննդյան 60-ամյակի առթիվ)

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մ. Կ. Զուլալյանը ծնվել է 1930 թ., Սիրիայի Հալեպ քաղաքում։ Նախնական կրթությունն ստացել է տեղի ֆրանսիական դպրոցում։ 1947 թ. ընտանիքով ներգաղթել է Խորհրդային Հայաստան։ Ավարտել է Լենինա-



կանի Մ. Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, այնուհետև Երևանի Վ. Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի ռոմանո-գերմանական ֆակուլտետը։ 1954 թ. ընդունվել է Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրա և դիտական ուսումնասիրության շրջանը անցկացրել Լենինգրադի համալսարանի Արևելագիտության ֆակուլտետում, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ։ Լենինգրադում պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա (1960)։ Այնուհետև աշխատանքի է անցել Հայաստանի ԳԱ պատմության ինստիտուտում, ձեռք բերել առաջատար գիտաշխատողի ճանաչում։ 1974 թ. պաշտպանել է դոկտորական դիսերտացիա։ Պատմության ինստիտուտում աշխատել է մինչև 1988 թ. հոկտեմբեր ամիսը՝ ավագ գիտաշխատողի պաշտոնով։ 1988 թ. հոկտեմբերից ց'օրս զբաղեցնում է Երևանի մանկավարժական ինստիտուտի ընդհանուր պատմության ամբիոնի վարիչի պաշտոնը։ 1990 թ. ընտրվել է ՀՀ ԳԱ թղթակից անդամ՝ հայրենական պատմական գիտության, հայագիտության մեջ ներդրած խոշոր վաստակի համար։

Մ. Կ. Զուլալյանը հայ արևելագիտության առավել ճանաչված ներկայացուցիչներից է, որը գիտական լուրջ պատրաստականության շնորհիվ իր ծանրակշիռ խոսքն է ասել հայագիտության, թուրքագիտության և իրանագիտության մեջ։ Սրանով հանդերձ, նրա գիտական նախասիրությունների մեջ առաջնայինը մնում է հայագիտության կարևոր խնդիրների ուսումնասիրությունը։ Գիտնականը այդպիսի ուսումնասիրությունը իրականացնում է աղբյուրագիտական հարուստ, բազմալեզու և բազմաբնույթ հենքի վրա։ Նրա աշխատություններում ըստ ամենայնի և նպատակասլաց օգտագործված են հայկական, օսմանյան, լատինական, ֆրանսիական և անգլիական աղբյուրներ։ Այս տեսակետից Զուլալյանի աշխատությունների մեջ աղբյուրագիտական կարևոր արժեք ունի «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (17—18-րդ դդ.)»,

(Երևան, 1964, Ռ. Սաֆրաստանի հեղինակցությամբ) օրենքների ժողովածուն։ Այն հայագիտությանը տրամադրում էր փաստական-աղբյուրագիտական նոր ծալքեր՝ առավել լուրջ և բազմակողմանի վերլուծության ենթարկելու Հայաստանում օսմանյան տիրապետության իրավական հիմքերն ու նորմերը։

Աղբյուրագիտական հատուկ ուսումնասիրություններին զուգընթաց, Մ. Զուլալյանը ստեղծել է պատմագիտական լայն ընդհանրացումների աշխատություններ։ Հարկ է նկատել, որ պատմարանի մշակած հետազոտության ընթացքը, առաջադրած դրույթներն ու եզրակացությունները հաստատուն կերպով հենվում են օտար աղբյուրների հիմնարար իմացության վրա։ Դրա վկայությունն է Մ. Զուլալյանի «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի դրությունը Օսմանյան կայսրությունում» (Երևան, 1966) աշխատությունը։ Այստեղ լուսաբանվում են Հայաստանի, մասնավորապես նրա արևմտյան տարածքների հայ բնակչության սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությունը՝ կապված կայսրության հիմքերը ցնցած ջալալիների ապստամբությունների հետ։ Ընդ որում, հայրենական և արտասահմանի պատմագրության մեջ ջալալիների շարժման գնահատականին Զուլալյանը մոտեցել է քննադատական դիրքերից՝ կարծիքների համադրության մեջ որոնելով և գտնելով առավել հիմնավորվածն ու համոզիչը։ Ըստ նրա, ջալալիների շարժումը արտացոլում էր ոչ միայն թուրքական ֆեոդալական պետության տնտեսական հիմքը կազմող հողատիրական-սեփականատիրական համակարգի խորը ճգնաժամը, այլև կայսրության նվաճված ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու ազգային-քաղաքական ճնշումների սաստկացումը, այդ ժողովուրդների տարերային, ազատագրական պայքարի ծավալումը։ Զուլալյանը նկատում է ռուս խորհրդային պատմագիտության հիրավի իրեն զգացնել տվող միտումը՝ թուրքական աղբյուրների և արդի թուրքական պատմագիտության հանդեպ որոշ անվերապահ, ոչ քննադատական մոտեցումը։ Ինքը՝ Զուլալյանը տալիս է դրանց նկատմամբ սկզբունքային դիրքորոշման համոզիչ օրինակներ՝ բացահայտելով 16—17-րդ դդ. թուրք պատմագիրների (Իբրահիմ Փեչևի, Սոլակզադե, Մուստաֆա Նաիմա, Քյաթիբ Չելեբի և ուրիշներ) տեսակետների կանխակալությունն ու փաստական անճշտությունները։ Մ. Զուլալյանի այս աշխատությունը շատ ավելի լայն ընդգրկումներ ունի, քան զուտ ջալալիների շարժման հետազոտությունն է, այն է՝ ժամանակի Արևմտյան Հայաստանի տնտեսական կացությունը թուրքական տիրապետության պայմաններում, հայության իրավական դրությունը՝ օսմանյան պետության քաղաքական պատմության հիման վրա։ Հեղինակը բնութագրում է հայ տարբեր սոցիալական շերտերի՝ գյուղացիության, արհեստավորության, աշխարհիկ վերնախավի, եկեղեցու դրությունը, վերջինիս արտաքին հարաբերությունները և այլն։ Զուլալյանի տեսակետները այս բնագավառում ամրապնդվում են հիմնավոր վերլուծությամբ և մեկնաբանություններով, նաև այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է գիտական տարակարծությունների տեղիք տված դրույթներին։ Այսպես, նա շատ ուշագրավ դիտողություններ է անում հայ համքարական կազմակերպությունների մասին, նշելով, որ հայ արհեստավորները չէին կարող մասնակցել մահմեդական ֆանատիզմով հագեցած ֆուտուվատներին։ Այս կարծիքը համոզիչ է, մանավանդ, եթե նկատի առնենք, որ օսմանյան պետության մեջ միլեթների համակարգը պետք է որ բացառեր տարակրոն արհեստավորների համախմբումը միևնույն կազմակերպության մեջ, որն ուներ կրոնա-բարոյական ուրույն նկարագիր։ Ավելացնենք, որ Մ. Զուլալյանի այս աշխատությունը նոր կողմերով է բացահայտում թուրքական հին և նոր պատմագրության ազգայնական կեցվածքը (Հյուսամուդդին Ամասիացի, Ի. Ուզունչարշիլը, Ի. Դանիշմենդ և ուրիշներ)։ Թուրքական պատմության ընկերության (Թյուրք թարիհ քուրումու) և նրա հրատարակած «Թարիխ» աշխատության քննադատությամբ (1930-ական թթ. սկիզբ) Զուլալյանը հանդես է գալիս որպես թուրքական արդի պատմագրության ծայր աստիճանի քաղաքականացված բնույթի և շովինիստական գաղափարախոսության հիմնավոր քննադատության սկզբնավորողներից մեկը ժամանակակից հայ պատմագրության մեջ։

Ըստ էության, այս վերջին հիմնահարցն է, որ ամբողջական հետազոտության առարկա է դարձել Մ. Զուլալյանի «Հայաստանի հին և միջին դարերի պատմության հարցերի լուսաբանումը արդի թուրք պատմագիտության մեջ» (Երևան, 1970, ռուսերեն) աշխատության մեջ։ Այստեղ բացահայտվում են հայ ժողովրդի՝ հնագույն շրջանից սկսած մինչև 18-րդ դ. պատմության հակագիտական մեկնաբանության թուրքական պատմագիտության փորձերը։ Փաստական բազմաթիվ ապացույցներով Մ. Զուլալյանը հերքում է պանթուրքական պատմագիտության այն պնդումները, թե իբր թուրքերը Փոքր Ասիայի հնագույն ժողովուրդն են և որ այնտեղ ապրում են դեռևս հին քարի դարի (պալեոլիթ) ժամանակաշրջանից։ Թուրք պատմաբանների

տեսակետների ինչ-ինչ տարբերությունները նշելով հանդերձ, Մ. Զուլալյանը ցույց է տալիս, որ նրանց բոլորի համար էլ ընդհանրական է, այս կամ այն չափով, պանթուրքական գաղափարախոսությունը։ Այս եզրակացությունը, ի դեպ, պահպանում է իր այժմեականությունը նաև մեր օրերում, թուրքական պաշտոնական պատմագիտության ճանաչողության տեսակետից։ Գաղափարական այսպիսի էքսպանսիվ հիմքը համապատասխան քաղաքական պայմաններում կարող է վերածվել գործողության. պանթուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարախոսությունը, ինչպես եզրակացնում է Մ. Զուլալյանը, երիտթուրքերին մղեց դեպի գերմանական գիշատիչ իմպերիալիզմի գիրկը, և այս դաշինքից ու համաշխարհային պատերազմից օգտվելով է, որ երիտթուրքերը 1915 թ. իրականացրեցին հայության ցեղասպանությունը։ Վերոհիշյալ ճանաչողության իմաստով չափազանց կարևոր է Մ. Զուլալյանի հետազոտության մի արդյունքը, այն, որ թեև Քեմալը անհեռանկար էր հռչակել պանթուրքական գաղափարախոսությունը և դրան հակադրել ազգայնականության դոկտրինան (միլլի սիյասեթ), թուրքական պատմաբանների համար պանթուրքիզմը և պանիսլամիզմը շարունակում էին մնալ գաղափարական հենասյուներ։ Ասվածը լիովին վերաբերում է մեր օրերի թուրքական պատմագրությանը։

Մ. Զուլալյանը նոր բովանդակությամբ է հարստացրել Արևմտյան Հայաստանի պատմության հիմնահարցը «Հայաստանը XVI դ. առաջին կեսին» (Մոսկվա, 1971, ռուսերեն) և «Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ.» մենագրություններում։ Նա հանդամանալի վերլուծության է ենթարկել հիշյալ ժամանակաշրջանի Արևմտահայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային իրականության հարցերը։ Նրա հետազոտությունների շրջանակը ընդլայնվում կամ ամրապնդվում է նոր կողմով՝ ժամանակի Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժումների պատմության հետազոտությամբ։ Մ. Զուլալյանի այս ուսումնասիրությունների արդյունքները հենվում են Իրանի և Թուրքիայի, և մյուս կողմից՝ ռուսական կայսրության քաղաքական փոխհարաբերությունների ու դրանցից ածանցվող տրամաբանության վրա։ Բուն հայ ազատագրական շարժումները հեղինակը ներկայացրել է հակասական ընթացքի, հարանվանությունների միջև առկա տարակարծությունների և նույնիսկ հակամարտության, այդ շարժումների արտաքին քաղաքական կողմնորոշումների տարբերությունների մեջ, առավել ամբողջականորեն վերարտադրելով ժամանակաշրջանը։ Ուշադրության է արժանի ստանվանդ Մ. Զուլալյանի միանգամայն հիմնավոր բնութագիրը, որ նա տալիս է հայ եկեղեցուն և նրա գործիչներին՝ ազատագրական շարժման մեջ։ Կանգնած լինելով այդ շարժման առաջավոր բնագծերում, հայ եկեղեցին որդեգրել էր իրատես կողմնորոշում, մերժում էր եվրոպական էքսպանսիան հիմնավորող կաթոլիկական դավանանքը և հանդես գալիս Ռուսաստանի արտաքին քաղաքականության ու հայ ազատագրական շարժման շահերի համերաշխության ոգեշնչումով, որ տվյալ պատմաշրջանում արդարացի էր և հիմնավորված։ Այս կտրվածքով Մ. Զուլալյանը հետազոտության նոր հուն է բանում XVI—XVIII դդ. հայ-ռուսական տնտեսական ու քաղաքական հարաբերությունների պատմության ուսումնասիրության մեջ, նոր կողմերով լուսաբանում Հակոբ Շամախեցի և Սիմեոն Երևանցի կաթողիկոսների, ինչպես նաև Հ. Արղությանի և Հ. Էմինի գործունեությունն ու դերը հայ-ռուսական հարաբերությունների ասպարեզում։ Մ. Զուլալյանը հիմնավորում է հայ ազատագրական շարժման միասնական, համազգային բնույթը և հետևողական քննադատության ենթարկում արևմտահայ և արևելահայ շարժումների առանձնության վերաբերյալ տեսակետը։

Արևմտյան Հայաստանի միջնադարյան պատմության, նրա տնտեսության ու քաղաքական նկարագրի էական կողմերն են լուսաբանված Մ. Զուլալյանի «Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դդ.» աշխատության (Երևան, 1980) մեջ։ Մի խումբ ճանաչված խորհրդային արևելագետների հետ միասին և շարունակելով իր աղբյուրագիտական հետազոտությունների ուղղությունը, Մ. Զուլալյանը հրատարակեց Էվլիյա Չելեբու «Սեյահեթ-նամեն» (Մոսկվա, 1983)։ Այս երկը աղբյուրագիտական կարևոր տեղեկություններ է պարունակում ժամանակի Հայաստանի քաղաքական ու իրավական կյանքի մասին և իբրև միջնադարյան սկզբնաղբյուր, լուրջ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն արևելագիտության, այլև հայագիտության համար։

Մ. Զուլալյանը բազմաթիվ կոլեկտիվ աշխատությունների հեղինակակից է։ Դրանց մեջ կարելի է առանձնացնել Ա. Հաչյանի հեղինակակցությամբ նրա հրատարակած «Ստամբուլի արհեստագործական արտադրությունը XVII դարի առաջին կեսին» (Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ. Թուրքիա, X, Երևան, 1979, ռուս.) աշխատությունը։ Այստեղ հմտալի քննության են առնված միջնադարյան օսմանյան տնտեսության մեջ հայ արհեստա-

գործության տեղի և նշանակության, ինչպես և նրա իրավիճակին վերաբերող գիտական լուրջ հիմնահարցեր, որոնց ուսումնասիրությունը առ այսօր մնում է հրատապ խնդիր։

Հայաստանի միջնադարյան պատմության հարցերի թեմատիկան Մ. Զուլալյանը ընդարձակեց վերջերս հրատարակած «Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների։ Գիրք Ա, քաղաքական պատմություն» (Երևան, 1990) հիմնարար հետազոտությամբ։ Այդ, հիրավի լայնահուն աշխատությունը, որի երկրորդ մասը հեղինակը պատրաստում է հրատարակության, գիտական նոր ուղղություն է բաց անում արդի հայագիտության մեջ։ Այդ ուղղությունը հեռանկարային նշանակություն ունի այն տեսակետից, որ Հայաստանի և հայ ժողովրդի պատմությունը բացահայտում է ոչ միայն փաստականորեն նոր բովանդակության վավերագրերի լույսով, այլև այն կողմից, որ առհասարակ ընդհանրացնող գիտական գնահատականներ են տրվում եվրոպական աղբյուրներին։ Աշխատության մեջ վավերագրերը խմբավորված են սկզբունքային մոտեցմամբ՝ հայ ժողովրդի քաղաքական պատմության հարցերի և Հայաստանի քաղաքական կացության համադրության մեջ։ Հետազոտության հիմքում ընկած փաստական վիթխարի նյութը հեղինակը գիտական շրջանառության մեջ է դրել Միջին արևելքի և Անդրկովկասի, ինչպես և եվրոպական երկրների քաղաքական ու տնտեսական հարաբերությունների նպատակասլաց վերլուծությամբ և խիստ հետևողական շարադրմամբ։ Աշխատության մեջ բազմակողմանի վերլուծության են ենթարկվում եվրոպացի հեղինակներ Պ. Կարպինիի, Մարկո Պոլոյի, Վ. Ռուբրուկի, Բ. դը լա Բրոկիերի, Ռ. Կլավիխոյի, դը Պեյսոնելի, Ջ. Անշիոլելլոյի, Ա. Կոնտարինիի, գ'Արամոնի, Պ. դելլա Վալլեի, Յու. Կրուշինսկու, Ռ. Դյումանի, Օլեարիուսի, Ժ. Տավերնիեի, Ռիկոյի, Տեվենոյի, Ժ. Շարդենի, Պ. Տուրնեֆորի և այլոց աշխատությունները, ուղեգրական նոթերը և այլն։ Աշխատության մեջ հաշվի են առնված նաև այլևայլ բնույթի եվրոպական վավերագրական նյութեր։ Մ. Զուլալյանը առանձնացրել է նրանց բազմաթիվ արժեքավոր տեղեկությունները Հայաստանի և հայ ժողովրդի մասին։ Եվ դարձյալ, աշխատության առավելություններից է նրա ինքնուրույն և վերլուծական հայեցակետը պատմական իրողությունների և ընթացքի վերաբերյալ, որից ելնելով եվրոպացի հեղինակների մտքերն ու դիտողությունները նա ներկայացնում է պատմական իրականության սթափ հաշվառմամբ, ուրեմն և որոշակի հետևողականությամբ։ Մ. Զուլալյանը այդ հեղինակների տեղեկություններն ու բերած փաստերը հաճախ զուգադրում է հայկական աղբյուրների հետ, որից շահում է ոչ միայն աշխատության վերլուծական բովանդակությունը, այլև՝ հավաստիությունն ու գիտական արժանահավատությունը։

Մ. Զուլալյանը տասնամյակներ շարունակ, 1960 թվականից առ այսօր հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդում է հայ ժողովրդի, Արևելքի նոր և նորագույն շրջանի պատմություն, իրեն հատուկ խնամքով ու հոգածությամբ ուսանողներին հաղորդում իր հարուստ իմացությունը, աճեցնում երիտասարդ գիտական կադրեր։

Վեց տասնամյակը բոլորած գիտնականը ունի բազմաթիվ ծրագրեր, որոնց իրականացման երաշխիքները իր անսպառ աշխատասիրությունը, փորձն ու բազմակողմանի գիտելիքներն են։ Արևշատություն և ծրագրերի իրականացում ցանկանանք Մ. Զուլալյանին՝ իր գործի նվիրյալին։

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱ ակադեմիայի թղթակից անդամ

Ա. Ա. ԽԱՌԱՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր